

սով ուսար չէ՞ր որ մեր բանաստեղծները համադրեց ու ցայտեցուց անոնց ուժն ու արժէքը:

Իսկ մե՞նք: Դարերը մեզ անուցեր են առասպելներով: Բաւական սեպեր ենք գիտնալ, թէ Հայկն է մեր նախահայրը՝ Նոյնն ու Ադամէն սերած ու յաղթած Բէլին, թէ հայ լեզուն դրախտէն կուգայ ու Աստուած իսկ անով է խօսած իր արարածներուն հետ, թէ մեր նախնիքը տիրեր են ծովերուն ու ժողովուրդներուն: Գիտութեան լոյսը վախճուցեր է մեզ: Աւելին: Ամօթ ենք սեպեր մեր փառքերը գեղջել ու պղտիկցնել մեր համբաւը: Դժկամակեր ենք ընդունիլ օտարին լուծն ու աղեցուցութիւնը մեր կեանքին, մեր բարքերուն ու մշակոյթին, մեր դպրութեանց ու արուեստին վրայ:

Հայ թատրոնը ուսումնասիրող մը ստիպուած է սակայն շատ համեստ ըլլալ: Օտարին տալ իր տուրքը ու փառք տալ մնացածին համար ալ: Ստիպուած է ընդունիլ, որ մեր պատմութեան ընթացքին մեր ժողովուրդն ու իր մշակոյթը յաճախ հարկատու են եղեր օտարին: Օտարէն լոյս ու անունդ առեր են, թէեւ շատ անգամ կրցեր են անոնց խառնել Հայաստանի հոգն ու ջուրը, խառնել հարազատ գիծ մը:

Պրպտողի մը համար ի՞նչ երանութիւն այդ հարազատ գիծը գտնել երբեմն:

ԹԱՏՐՈՆԻ ՄԱԳՈՒՄԸ

Թատրոնը, ինչպէս յայտնի է, ծնունդ առած է հին Յունաստանէն: Առաջին «թատերախաղ»երը ուրիշ բան չէին բայց եթէ ի պատիւ Դիոնիսոսի կամ հնձանեան աստուծոյն երգուած տաղեր: Տեսակ մը ժողովրդական զբօսանք էր այդ, որու միջոցին լաւագոյն երգիչները իրեւ ընծայ կը ստանային նոխազ մը: Աւանդութիւնը կ'ըսէ, թէ Իկարոս անուն մէկը օր մը իր արտերուն մէջ գտաւ նոխազ մը, որ վնաս կը հասցնէր իր ալիքներուն, զարկաւ սպաննեց զայն եւ իր մշակներուն տուաւ, որ ուտեն. անոնք ալ կերուխում մը սարքեցին, պար բռնեցին նոխազին շուրջը ու նստան կերան: Անիկ յետոյ սովորութիւն եղաւ, որ ամէն աշնան ալիքակութիւն ատեն՝ աշխատաւորները նոխազներ կը մորթէին կ'ուտէին եւ նոր

գինին խմած՝ կառքերու մէջ կը մտնէին ու կը պատէին ամբողջ քաղաքը:

Թէպէտ էր, որ այս անկաղձակերպ հանգէսներուն վայելչութիւն մը հաղցուց: Սահմանեց, որ Դիոնիսոսի քաջութիւնը նուազող դերասանները երբեմն հանդիստ առնեն: Այդ հանդիստի միջոցին էր, որ իրենցմէ մէկը կ'ելլէր՝ գլուխը գտինիէ կամ լախուրէ պսակ մը դրած՝ հնձանեան աստուծոյն կամ ուրիշ դիւցազնի մը քաջութիւնները կը պատմէր, կամ պարերգուներու երգերուն պատասխան կուտար արձակ խօսքերով:

Ինչպէս ըսինք, ամէն տարի այս հանգէսները տեղի կ'ունենային ի պատիւ Դիոնիսոսի քաջութիւններուն: Միակերպութիւնը, սակայն, սկսած էր տաղտկալի դառնալ: Ուստի քերթողները ստիպուեցան նիւթերին փոխել:

Թատերական գլխաւոր դործիքը նախապէս կառք մըն էր, ուր երգեցիկները կը նըստնէին եւ քաղքէ քաղաք կը պատէին: Բայց երբ ողբերգութիւնը սկսաւ կաղմուիլ՝ քիչ մը աւելի լրջութիւն ասացաւ թատրոնը, եւ մասնաւոր խաղատեղի սահմանուեցաւ անոր:

Այս կերպով էր, որ ծաղում առաւ թատրոնը: Ուրեմն Յունաստանն էր անոր ծննդավայրն ու օրօրոցը: Ու հոն ալ ծլեցաւ ու ծաղկեցաւ ան:

ՀԵԼԼԷՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆԸ ԴԷՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ

Վեցերորդ դարէն սկսեալ մինչեւ չորրորդ դարու երկրորդ կիսուն Քրիստոսէ առաջ, Հայաստանի մէջ տիրապետող էր պարսկական քաղաքակրթութիւնը: Պատմութենէն գիտենք, որ Հայերը այդ շրջանին կը կառավարուէին պարսիկ սատրապներով, պարսկական օրէնքներով կը դատուէին եւ կը մասնակցէին պարսկական գէնքին: Այդպէսով՝, որ հայ ժողովուրդին մէջ տարածուեցան պարսիկ լեզուն եւ պարսկական սովորութիւնները:

Քանոփոն կը պատմէ, թէ հայ կիներն անգամ գիտէին ու կը խօսէին պարսկերէնը: Հայաստան այդ առթիւ կրեց հետքերը եւ պարսկական կրօնին:

Ստրաբոն կ'ըսէ, թէ Պարսից գրեթէ բոլոր